



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2382

593

13787

1734

NA

13787

154 1871

593

ՊԵՏՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

Ա. Ո.

ԱՄԵՆԱՊԱՏԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՅՐՆ

ԵՒ Ա. Ո.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



01

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԻԷԼԵՆՏԻՆՈՍԱՆ

— 1871 —

RESPECTUALLY REQUESTED

2 P L P U P L

RESPECTUALLY REQUESTED

RESPECTUALLY REQUESTED

RESPECTUALLY REQUESTED

RESPECTUALLY REQUESTED

RESPECTUALLY REQUESTED

RESPECTUALLY REQUESTED

RESPECTUALLY REQUESTED

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

13787

Ա.ՁԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

Ա.Ռ.

ԱՄԵՆԱՊԱՏԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՅՐՆ

ԵՒ ԱՌ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՆ Ա.ՁԳԱՅԻՆ ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Նախաբան

Ազգային կրթութեան խորհուրդս Ձեր Սրբազնութեան և պատկառելի Ժողովոյդ հրաւիրանօք անցեալ Մարտի 16ին իւր նիստերն սկսելով, իրեն յանձնուած պաշտօնին կատարմանը ձեռնարկեց: Խորհուրդս իր կազմութենէն անմիջապէս ետքն իւր առաջին ուշադրութիւնը նուիրեց ազգային վարժարանաց ներկայ վիճակին բարւոքմանը, և այս նպատակաւ անմիջապէս որոշեց.

Ա. Իրարու մօտ գտնուող և յարմարութիւն ունեցող թաղերը միացնելով բաց ի իրենց նախնական դպրոցներէն՝ կեդրոնական դպրոցներ ալ հաստատել:

Բ. Դպրոցներն ու անոնց հոգաբարձութիւնները կարգաւորեալ դրութեան մը ենթարկել և դպրոցային հոգաբարձութեանց և թաղական խորհրդոց փոխադարձ յարաբերութիւններն որոշ սահմանի մը ներքեւ դնել, որպէս զի հոգաբարձութիւններն ազատ մնան այս վերջիններուն ազդեցութեան փաստակար հետեւանքէն, ազդեցութիւն մը՝ որ շատ անգամ անկարող ձեռքերու մէջ դպրոցաց աղետաբեր եղած

է, մանաւանդ երբոր թաղային վէճեր ալ կը ծագին:

Բայց այս որոշումները գործադրել չը կարողացաւ խորհուրդս, փասն զի գործադրելու միջոցներէն զուրկ էր բոլորովին, մանաւանդ որ կրթական խորհրդոյ կամ որ նոյն է՝ ազգային վարչութեան կրթական մասին իրաւասութեան սահմանը ճշդիւ որոշուած և բոլոր ազգային վարժարանաց ու անոնց հոգաբարձութեանց հետ իւրյարաբերութիւնները սահմանուած չ'են: Խորհուրդս գոնէ ապագային պատրաստութիւն տեսնելու համար՝ որոշեց ազգային դպրոցաց վիճակը քննութեան առնուլ, և ասոր համար դպրոցներն անձամբ այցելութիւններ ընել: Հետեւաբար մայրաքաղաքիս բոլոր գլխաւոր ազգային դպրոցներն յատկապէս այցելութիւններ ըրաւ, և այն դպրոցներէն ալ ուր չը կրցաւ անձամբ երթալ, դրաւոր տեղեկութիւններ խնդրեց, որոց մէկ մասը տակաւին չ'է ըստացած:

Այս այցելութեանց և տեղեկութեանց արդիւնքը պիտի մատուցանէ առ Ձեր բարձր Սրբազնութիւն և Կրթ. Պատկառել.



ի ժողովք իբրև վիճակացոյց մայրաքաղաքիս ազգային վարժարանաց, որոց վրայ իւր ընդհանուր գիտողութիւններն ու խորհրդածութիւններն են հետևեալները:

1. Երկու վարժարան

Մայրաքաղաքիս ամէն թաղերուն մէջ, Հայ ազգն իւր եկեղեցիներուն քով վարժարաններ ալ կառուցած է: Քաղաքական իշխանութենէ և հարուստ ելումուտքէ զուրկ ժողովուրդի մը համար այս շէնքերը բնածին յառաջադիմութեան և զարգացման տրամադիր ազգի մ'աշխատանաց և խնայութեան արգասիքն են, և կրնան աւոր ապագայ լուսաւորութեան և քաղաքակրթութեան հիմն ըլլալ:

Այս ուսումնական յարկերն անժխտելի է որ մինչև հիմա քիչ շատ արդիւնք տրւած են, բայց ոչ ըստ համեմատութեան անոնց համար եղած զոհողութեանց: Ժամանակին հողովմամբը նիւթական և մրտաւորական պէտքերն աւելցած ըլլալով ներկայ դպրոցական հաստատութիւնները իրենց այս վիճակին մէջ անբաւական եղած են, և հարկ զգացուիլ սկսած է որ անոնց մեծագոյն մասը նախնական դպրոցի կարգ դասելով երկրորդական կարգի բարձրագոյն դպրոցներ ալ ունենանք թէ հոս և թէ դաւառները:

2. Վարժարանաց վիճակը

Ընդհանրապէս խօսելով մայրաքաղաքիս դպրոցներուն մէջ աւանդուած ուսմունքն են Հայերէն Գաղիերէն Տաճկերէն լեզուաց սկզբունքները, Թուաքանութիւն, Աշխարհագրութիւն, Ազգային և Սրբազան պատմութիւն, Գիր և Գծագրութիւն: Շատ վարժարանաց մէջ այս ուսմունքներն ալ առաւել կամ նուազ պակաս են, և ուսմանց ընթացքը կանոնաւոր չ'է: Խրաքանչիւր դպրոցի եկամտից մեծ մասը թաղական սնտուկներէն, այսինքն եկեղեցեաց եկամուտներէն կը հայթայթուի, մընացեալն ալ աշակերտաց ամսականներէ և

նուիրատուութիւններէ կը գոյանայ: Այս զանազան գումարներուն նայելով կրնանք ըսել թէ մայրաքաղաքիս Հայ ազգն իր վիճակին բազդատութեամբ, դաստիարակութեան համար տարուէ տարի մեծ ծախք կ'ընէ, որուն վրայ քիչ մը ծախք և խընամք ալ աւելցնելով, անկարելի չէ դաստիարակութիւնը հասարակաց բաղձանքին պատասխանող արդիւնաւէտ վիճակի մը հասցնել:

3. Երկու վարժարաններն եւնող աշակերտ

Մեր վարժարաններէն եւնող աշակերտները կրնանք երեք կարգի բաժնել: Առաջին կարգին մէջ կրնանք դասաւորել այն մանկունքը, որք բաւական Հայերէն լեզուքիչ մը Գաղիերէն և Տաճկերէն, քիչ մը Թուաքանութիւն ևն. սորվելէ ետև դպրոցէն կելնեն և արուեստի մը կ'երթան կամ գործի մը կը մտնեն: Առ այժմ վարժարաններէն եւնող աշակերտաց մեծագոյն մասն այս կարգէն են: Այս կարգի աշակերտաց դրեթէ բոլորն ալ նիւթական կարողութիւն չ'ունենալով ստիպուած են Ազգավարժարանաց մէջ ընդունած դաստիարակութեամբ բաւականանալ, վասն զի զայն հոս կամ Եւրոպայի բարձրագոյն և մասնաւոր ճեմարաններու մէջ կատարելագործելու միջոցներէ զուրկ են: Հասարակաց բարին մտածողներու համար այս կէտերը պէտք է խորին ուշադրութեան առարկայ ըլլան. ուստի պէտք է այս կարգի աշակերտաց վրայ մեծ հոգ և խնամք տանիլ, իրենց ուսմունքը կարելի եղածին չափ լըրացնելու աշխատիլ, և գոնէ գլխաւոր գիտութեանց սկզբունքները իրենց աւանդելով ուսման և յառաջադիմութեան վիաւաքն իրենց սրտին մէջ դնել:

Երկրորդ կարգի աշակերտներն անոնք են, որք թաղային դպրոցը թողլէ ետև Մէթէպը-Սուլթանի կամ կայսերական Բըժըշկութեան ուսումնարանը, կամ Նուպար-Շահնազարեան վարժարանը և կամ սոնց նման վարժարաններ կը մտնեն: Ասոնց ծնողքը թէպէտ ըստ մեծի մասին

նիւթական կարողութեան տէր ալ ըլլան, տարակոյս չը կայ որ իրաւունք ունին թաղային վարժարանաց մէջ իրենց զաւակներէն լաւագոյն դաստիարակութիւն ընդունել, այնպիսի դաստիարակութիւն մը, որով կարող ըլլան վերոյիշեալ հաստատութեանց պէս արքունի կամ ուրիշ բարձրագոյն վարժարանաց մէջ դիւրութեամբ ընդունուիլ: Ասիկայ ոչ միայն ծնողաց յուսալիր մխիթարութիւն մ'է և մանկանց քաջալերութիւն, այլ և ազգային պատուոյն և օգտին համար էական կէտ մը: Քանզի երբոր տղայ մը ազգային վարժարաններէն բաւական ուսման և գրականութեան դրամագլխով մը կը ներկայանայ բարձրագոյն վարժարաններուն, ոչ միայն դիւրութեամբ կրնայ ընդունուիլ ի պատիւ ազգային դպրոցաց մէջ ընդունած կրթութեան, այլ և անմիջապէս իր նոր ուսումնական ասպարէզին մէջ առաջ երթալ կ'ըսկսի: Այնչափ ստոյգ է այս, որ մօտերս Տօ.թթօր Մալթոսեանի կողմէն Մեթոտի մէջ հրատարակած յօդուածով մը կ'ըսէր թէ՛ կայսերական բժշկական ուսումնարանիս քրիստոնեաց աշակերտները իրենց ազգային նախնական և երկրորդական վարժարանաց մէջ աւելի հաստատուն գրական և ուսումնական ծանօթութիւններ առած ըլլալով, իրենց Մահմետական աշակերտակիցներէն առաւել դիւրութեամբ կ'սովորին բժշկութեան նըման ընդարձակ և գծուարին գիտութիւն մը: Ուրեմն մեր ազգային վարժարանաց մէջ յիշեալ գրական և ուսումնական ծանօթութիւններն որչափ ընդարձակենք, այնչափ օգուտ կը քաղեմք:

Աշակերտաց երրորդ կարգ մ'ալ կայ, որ ազգային վարժարանաց մէջ գտնուած ուսմանց մինչև վերջին ծայրն երթալով, կատարելին վարժարանը ձգել, բայց չողերով կամ չկրնալով բարձրագոյն կամ մասնաւոր վարժարաններ մտնել, ինքնին գրքերու կամ մասնաւոր դասատուներու միջոցաւ կ'շարունակեն իրենց կրթութիւնը: Պէտք է որ այս կարգի աշակերտաց ալ աւանդուած ըլլան գլխաւոր գիտութեանց սկզբունքները, որպէս զի վարժարաններէն

ելնելէ ետքը իրենք զիրենք կատարելագործելու կարող վիճակի մէջ ըլլան:

Կը թողունք այն աշակերտները, որք եւրոպայի ուսումնարանները կրթման մասնաւոր գիտութիւն մը սովորելու համար, վասն զի առնք շատ անգամ ազգային դրոյններէ ուրիշ վարժարաններ մտնելէ ետեւ եւրոպա կ'ուղևորին:

4. Բարձրագոյն ուսմանց պէտք:

Եթէ մեր վարժարանաց վիճակը ուշի ուշով քննենք, չենք կրնար խղճի մտօք ըսել թէ անոնք ժամանակիս պահանջած մը տաւորական պիտոյքը մատակարարելու կարող վիճակի մէջ են: Տղոց ապագայն ազգին ալ տպագայն է, և զայն ապահովելու համար ամէն ջանք և զոհողութիւն պէտք է ի գործ դրուի: Ազգային մանկուոյն շահը կը պահանջէ, որ առանց ժամանակ կորուսանելու կարևոր և հիմնական բարեկարգութեանց ձեռնարկուի կրթութեան մասին: Իրաւ է որ նախնական կրթութիւն մը ունենք, այն ալ խիտ թերի, բայց ժամանակին պահանջմանց նայելով միայն նախնական կրթութիւնը բաւական չէ. ուստի՝ որպէս զի Հայ մանկտին կարենայ ապագային մէջ լուսաւորութեան և քաղաքակրթութեան բարեաց մասնակցիլ, բարձրագոյն ուսմանք և գիտութիւններ ալ պէտք են, որոց միջոցաւ կարենան իրենց գործունէութեան արդիւնաւէտ ասպարէզ մը գտնել: Նախնական կրթութիւնը հիմունքն է. սակայն պէտք է որ այդ հիմունքը բարձրագոյն գիտութիւններով սլասակուած ըլլայ. մեր բոլոր ջանքը նուիրելու ենք, որ այս շէնքը պսակուի, բարձրագոյն ուսման սկզբունքն ալ մեր վարժարանաց մէջ աւանդուելով, և եթէ չենք կարող այն շէնքին պալատի մը շքեղութիւնը տալ, գոնէ կատարեալ և հաստատուն կերպիւ կառուցեալ հասարակ տան մը ատիճանին հասցրնելու ենք: Եւրոպացիք այնչափ լաւ հասկցած են բարձրագոյն ուսմանց կարևորութիւնը, որ Գաղղիական հասարակապետութեան հասարակաց կրթու-

Թեան պաշտօնեայ, անուանին Պ. Ժիւլ-Սի-
մոն, անցեալները փարիզի տառապեալ վի-
ճակին մէջ անգամ կրթութեան խնդիրը
ուշադրութեան առնելով, բարձրագոյն ու-
սումները ձրի աւանդելու համար շրջաբե-
րական մը ուղղած էր բոլոր Գաղղիոյ դա-
ւառապետաց :

5. Գաւառական դպրոցներ :

Մինչև հիմայ Գաւառական դպրոցներ-
րուն վրայ չի խօսեցանք : Ասոնց վրայ խիստ
քիչ մասնաւոր տեղեկութիւններ ունինք .
բայց ասոնց ընդհանուր վիճակը նկարագ-
րութեան կարօտ չէ : Գաւառաց մէջ որ
կողմ որ ակնարկ մը ձգենք, դժբաղդաբար
տղիտութեան մառախուղն աւելի թանձր,
զայն փարատելու ջանքերը նուազ կամ
թոյլ, և վարժարանները միօրինակ յետ-
նեալ վիճակի մէջ կը տեսնենք, քանի մը
հաղուադիւտ բացառութեամբ : Յաւալին
այն է որ տեղական վարչութիւններն և
վիճակաց Առաջնորդները շատ անգամ
բարձի թողի կ'ընեն վարժարանները, որք
ազդային յառաջադիմութեան ազբիւրն
են : Գպրոցաց համար կարող հոգաբար-
ձութիւններու և դասատուներու պակասու-
թիւնը գաւառաց մէջ աւելի զգալի եղած
է :

6. Աղջկանց վարժարաններ

Հասարակաց կրթութեան մէկ մեծ և
կարևոր ճիւղն ալ աղջկանց դաստիարա-
կութիւնն է : Ժամանակիս ճանչցած սկզբ-
բանց մէկն է թէ՛ մանկանց կրթութիւնը
պէտք է օրորոցէն սկսի : Բայց ի՞նչպէս կա-
րելի է դորձագրել զայս առանց կիրթ մայ-
րերու : Ասոր համար աղջկանց վարժարան-
ներու պէտքն ալ բոլոր լուսաւոր միտքե-
րու զգալի եղած է, լուսաւոր միտքերու
կ'ըսենք . քանզի դժբաղդաբար կրնան տա-
կաւին գտնուիլ այնպիսի միտքեր ալ, որք
հին գաղափարներով տողորուած, աղջկանց
կարգալ գրել սորվիլը չարիք մը համարին :
Գաւառաց մէջ մանաւանդ, ի բաց առեալ

մէկ երկու տեղ, իգական սեռին դաստիա-
րակութիւնը դեռ նոր պիտի սկսի : Թէև
իգական սեռը աշխարհիս վրայ առաւել
տնական և ներքին գեր և պաշտօն մ'ու-
նենալով՝ տրական սեռին չափ անգուլճը-
գանց և մրցման կոչուած չլլայ, բայց և
այնպէս իբրև մարդկային անհատ՝ իբրև
կին՝ իբրև մայր՝ այս սեռն ալ քաղաքա-
կիրթ ընկերութեանց մէջ մեծամեծ պար-
տիք ունի, որոց կատարմանը ուսմամբ և
կրթութեամբ միայն կրնայ ձեռնհաս ըլլալը
Սակայն շնայելով իրենց տարուած մասնա-
ւոր խնամքներուն՝ մայրաքաղաքիս աղջկանց
վարժարանները ճշմարիտանալիներ և
դաստիարակչական մայրեր պատրաստելու վիճակի
մէջ չեն բոլորովին՝ կարողութեանց և մի-
ջոյններու նուազութեան պատճառաւ . ա-
սոնք ալ մանչ տղայոց վարժարաններուն
պէս տակաւին շատ բարեկարգութեանց
պէտք ունին : Գաւառաց մէջ ալ քանի մը
քաղաքներ միայն աղջկանց վարժարաններ
կան, որոց վիճակին վրայ ստոյգ տեղեկու-
թիւն չունինք : Ուստի աղջկանց համար ալ
առ այժմ դոնէ հաստատուն նախնական
կրթութեան մը համար բարեկարգ վարժա-
րաններ, և ասոնց վարժուհիներ հասցնե-
լու համար իգական սեռին յատուկ վարժա-
պետական դպրոց մը ոչինչ նուազ պէտք է :
Հետեւաբար եղածները բարեկարգելու և
խնամելու, և չեղած տեղերն ալ աղջկանց
վարժարաններ բանալու, ինչպէս նաև վար-
ժուհեաց դպրոց մը հաստատելու պէտքը
չը կրնար ուշադրութենէ վրիպիլ :

7. Գոսպիլեր :

Բայց ազդային կրթութեան պակասու-
թիւնները միայն ասոնք չեն : Գպրոցաց մէջ
ուսմանց կանոնաւոր դասադիրքերն ոչինչ
նուազ անհրաժեշտ են : Սակայն այս մասին
ալ չենք կրնար ըսել թէ պէտք եղածն ու-
նինք : Գասադիրքերն ուսմանց բանալիքն
են . ուստի առանց ասոնց ի՞նչպէս կարելի
է ուսմանց և գիտութեանց սկզբունքը
համբակաց աւանդել : Իրաւ է որ Հայերէն
լեզուի մէջ ալ թարգմանութեամբ կամ հե-

դինեակու թեամբ ի լոյս ընծայեալ ուսումնա-
կան գրեանք կը դանուին, բայց ասոնց ա-
մենամեծ մասը յասկապէս դպրոցներու
համար շինուած կամ պարզ և դիւրըմբռնե-
լի մեթոտներով շարագրուած չեն. շատ մը
կարևոր գիտութեանց համար ալ տակաւին
բնաւ դասագիրք չունինք:

Յ. Գասաւորացի

Նոյնը կրնայ ըսուիլ նաև դասատուաց
մասին: Բազմաթիւ Հայ դասատուներ կան,
սակայն մեծ մասը դասատուութեան աս-
պարէզին համար կրթութիւն առած չ'ըլլա-
լով, դէպքը զիրենք նետած է այն աս-
պարէզին մէջ: Լուսաւորեալ ազգաց մէջ
դասատուները տարիներով իրենց պաշ-
տօնին կը պատրաստուին, վասն զի անոնք
դասատու ըսելով ո՛չ միայն այսինչ կամ
այնինչ ուսմունքը սովորեցնող, այլ և միան-
գամայն աշակերտները բարոյապէս և մը-
տաւորապէս կրթող և զարգացնող կը հաս-
կանան: Բան սորվեցնել, աշակերտին սիր-
արն ու միտքը մշակելով բան սորվեցնել
— իրարմէ շատ տարբեր բաներ են. մեր
դասատուաց մեծ մասը լոկ բան սորվեցը-
նող է և այն ալ շատ անգամ անհասկա-
նալի և տաղտկալի եղանակաւ. վասն զի
արդի ուսուցչական կատարելագործեալ
մեթոտներուն վրայ տեղեկութիւն չ'ունին:
Իրենց թերութեանց գլխաւոր պատճառ-
ներն են. մասնաւորապէս դասատուու-
թեան և դաստիարակութեան պաշտօնի
պատրաստուած չ'ըլլալն. Բ. շատ զբա-
ղած ըլլալով իրենք զիրենք կատարելա-
գործելու ժամանակ չ'ունենալն և Գ.
ընդհանրապէս քիչ բացառութեամբ՝ գո-
հացուցիչ վարձատրութիւն չստանալն:
Նախակրթարաններու դասատուները և
կառավարիչները, որոնք որ ազգի մը դաս-
տիարակութեան անկեան քարերն են,
ընդհանրապէս շատ աւելի խեղճ վիճակի
մէջ են. ո՛չ իրենց փափուկ պաշտօնը վա-
րելու ընդունակութիւն ունին և ո՛չ փոքր
ի շատէ մարդավայել եղանակաւ ապրելու
չափ՝ վարձատրութիւն: Գասաւորացի խըն-

դերը շատ մեծ խնդիր է, որուն վրայ բո-
լոր ազգին ուշադրութիւնը հրաւիրել աը-
ժան կը համարինք:

Ծ. Ուսումնական կանառ:

Լեզուն ազգի մը կրթութեան և զար-
գացման առաջին գործիքն է, որով ազգի
մը անհատները գիտութեանց սկզբունքը
պիտի ընդունին: Ուստի Հայերէն մաքուր
աշխարհիկ լեզուի մը մշակութիւնն ազգա-
յին յառաջադիմութեան էական պայման-
ներէն մէկն է: Գծբազդաբար Հայերէն լե-
զուն օր քան զօր ծաղկելու և մշակուելու
տեղ ինչպէս որ ժամանակիս յառաջադիմու-
թիւնը կը պահանջէ, աղաւաղելու վիճակի
մէջ ինկած է: Ազգային մամուլն ստուգիւ
լեզուին բարւոքման ըստ բաւականին ծա-
ռայեց, բայց մամուլը տարբեր անդամնե-
րէ (օրկան) բաղկացած, և իւրաքանչիւր
անդամ ըստ քմաց մասնաւոր լեզու մը և
մասնաւոր բացատրութիւններ հնարած ըլ-
լալով լեզուին մէջ փոխանակ մաքրութեան
խառնակութիւն և շփոթութիւն մտցուցած
է: Հետեւաբար դեռ բոլորովին մշակուած
գրական լեզու մը չունինք, և օտար լեզ-
ուաց բազմաթիւ ուսումնական և արուես-
տական բառերու Հայերէն զուգակշիռնե-
րը գտնուած չեն:

Ահա այս պատճառներուն համար կա-
րևոր կտեսնուի հայկական Ալֆաբետի կամ
ուսումնական կանառ մը կազմել ազգիս
մէջ գտնուած առաջին կարգի ուսումնա-
կան և գրագէտ անձերէ: Այսպիսի կանառ
մը կրնայ ուսմանց դասագրքեր պատրաս-
տել, ազգային լեզուին մաքրութեան ու
միօրինակութեանը հոգ տանել, պէտք ե-
ղած ուսումնական և արուեստական մաս-
նաւոր բառերն յօրինել, նոր բառգիրք մը
չինել ևն. ևն: Ազգին մէջ գիտութիւններ
տարածելու համար մշակուած լեզու պէտք
է, իսկ մշակուած լեզու ունենալու համար
պէտք է որ թէ՛ նախակրթական և թէ՛ բարձ-
րագոյն կարգի վարժարանաց մէջ բոլոր գի-
տութիւններն ալ Հայերէն լեզուով աւանդ-
ուին: պէտք է որ մաքուր աշխարհիկ լեզ-
ուով գրուած դասագրքեր ունենանք գի-

տութեանց բոլոր ճիւղերուն համար : Այս մեծ գործը կատարելու համար մտաւոր և դրամական զօրութիւն պէտք է : կարելի է ըսել թէ երկուքն ալ գէթ փոքր ի շատէ կդանուին ազգին մէջ, բայց ցիր ու ցան վիճակի մէջ են : կը յուսանք որ երբ ազգին մտաւոր զօրութիւնը տեղ մը ամփոփուելով, ուսումնական մարմին մը կազմուի, այն ատեն դրամական զօրութիւնն ալ անոր օգնութեան կը հասնի . բարերար անձինք կրնան կտակներ ընել անոր, որպէս զի ազգիս մէջ ուսմանց և գրականութեան զարգացմանը նպաստող միջոցներու գործածէ, օրինակի համար մրցումներ (քօնքուր) հաստատէ . պիտանի և օգտակար հեղինակութեանց կամ թարգմանութեանց վարձատրութիւններ սահմանէ, ազգային ուսումնական զարգացման օժանդակիչ ընկերութիւններ կազմէ, ինչպէս որ օրինակները Եւրոպայի լուսաւորեալ ազգաց մէջ կտեսնուին :

10. Կրթական վերափոխումներ :

Կրթական խորհուրդը գործադրական մարմին մ'է որ եթէ միմիայն խորհրդածութիւններով զբաղի առանց գործելու, չի կրնար բնաւ արդիւնք մը ցուցնել : Երբոր վարժարանաց վիճակը մեր ազգին առջև կբերենք, և անոնց վրայ անդուլ անդադար հսկողութիւն ընելու պէտքը կըզգանք, հարկ կըլլայ հետևեցնել թէ կրթութեան խորհուրդը գործելու համար ստորադասեալ պաշտօնատարաց պէտք ունի : Առ այժմ պէտք կտեսնուի ընդհանուր վերատեսչի մը, և երկու երեք օգնականի ևն, որպէս զի նախ Մայրաքաղաքիս վարժարանաց բարեկարգութիւնները կարելի ըլլայ ի գործ դնել, և անոնց վրայ ըստ արժանւոյն հսկել . երկրորդ՝ գաւառային վարչութեանց հետ թղթակցելով, գաւառաց մէջ ալ ազգային կրթութեան մեծամեծ պարտաւորութիւնները կատարելու ձեռնարկել : Այսպիսի դիւան մը կազմելու համար՝ առ նուազ տարեկան 30,000 զրշ եկամտի պէտք կայ, զոր կարելի է հայթայթել Մայրաքաղաքիս ազգային վարժարանաց ներկայ ծախքերէն, որք մէկ միլիոն

զրշ ի կհասնին, հարիւրին հինգ նպաստ մը առնելով : Բայց այս կամ ուրիշ լուազոյն միջոցի անօրէնութիւնն Սղգ. վարչութեան և ընդհ. ժողովոյ որոշմանը կը վերաբերի :

11. Երբեք փոխ :

Ասոնք են ահա, Սմեն. Ս. Հայր և Մեծապատիւ Տեարք, Սղգ, դպրոցաց և կրթութեան վրայ մեր ընդհանուր դիտողութիւնները : Տարակոյս չկոյ որ Սղգի մը կրթութեան և լուսաւորութեան նպաստող միջոցները միայն առաջարկուածները չեն, այլ տակաւին շատ մը ուրիշ միջոցներ կան . որք եթէ ոչ ուղղակի՝ գէթ անուղղակի կերպով միշտ ազդեցութիւն ունին ազգի մը մտաւոր և բարոյական կեանքին վրայ . բայց խորհուրդս պարտք կհամարի այն միջոցները միայն առաջարկել, որոց գործադրութիւնը կարի ստիպողական կերևի ամէն անոնց՝ որք ազգին ներկայ վիճակը իրենց խորհրդածութեանը առարկայ ըրած են :

12. Առաջարկումներ :

Արդ՝ խորհուրդս իր ընդհանուր դիտողութիւնները ամփոփելով կը համարձակի հետևեալ առաջարկութիւնքն ընել .

Ս. Մայրաքաղաքիս վարժարանները կանոնաւոր վիճակի մէջ դնել և միանգամայն երկրորդական աստիճանի քանի մը կեդրոնական դպրոց հաստատել : Ասոր համար երկու միջոց կայ . նախ՝ ներկայ վարժարաններուն չը դաչելով քանի մը յարմար թաղերու մէջ չորս կամ հինգ կեդրոնական նոր դպրոց հաստատել : Բայց որովհետև ասոր համար մեծագումար ծախք մ'ալ բանալ պէտք է, որ ազգին վիճակին նայելով դժուարին կ'երևի հայթայթել, ուստի աւելի գործադրելի կը թուի մեզ (ինչպէս որ նախորդ Ուսումն. խորհուրդն ալ առաջարկած էր) երկրորդ միջոցի մը դիմել, այն է իրարու մեծագոյն քանի մը թաղերը միացնելով, համաձայնութեամբ իրենց ներկայ վարժարանները զուտ նախակրթարաններու վերածել, և աւելցած եկամուտներով կեդրոնական դպրոց մը բանալ :

Առ այժմ կարելի է առանց դժուարու-

Թեան միացնել հետևեալ թաղերը, ուր արդէն կեդրոնական վարժարան ըլլալու յարմար դպրոցական շէնքեր ալ կան .

- 1. Գուսնգափու, Եէնի-գափու, Կէտիկ-բաշա
- 2. Նարլը-գաբու, Սամաթիա, Եէնի-մահալլէ
- 3. Գարա-կէօմլիկ, Սալմաթօմբուգ, Պալաա
- 4. Իւսկիւտար Եէնի-մահալլէ, Սէլամիյէ և Իճատիյէ :

Նմանապէս գոնէ քանի մը բարձրագոյն կամ կեդրոնական վարժարաններ ալ գաւառագլուխները բանալ :

Բ. Գաւառագլուխներու մէջ դպրոցական տեսչութիւններ հաստատելով Ազգ. կրթութեան խորհրդոյ հետ յարաբերութեան մէջ գնել և իւրաքանչիւր գաւառի վարժարաններու վիճակը քննելով անմիջապէս բարւոքման միջոցները խորհիլ և գործադրելու հոգ տանիլ :

Գ. Դասատուներ ու վարժուհիներ հասցընելու համար երկու սեռի վարժապետական առ այժմ գէթ երկու դպրոց հաստատել : — Եթէ այսպիսի երկու դպրոց հաստատուի, կարելի է ներկայ վարժարանաց յառաջադէմ աշակերտներէն և աշակերտուհիներէն, անոնք որ կ'ուզեն դաստիարակութեան ասպարէզն ընդունել ընտրանօք յիշեալ վարժարաններն առնուլ որով երկու երեք տարիէն բաւական կիրթ դասատուներ և վարժուհիներ կրնան հասնիլ :

Դ. Նախնական և երկրորդական վարժարանաց համար ամեն ուսմանց դասագիրքերն որոշել, առ այժմ պատրաստ գտնուածներուն մէջէն ընտրելով և պակասներն ալ հետզհետէ պատրաստել և հրատարակել տալ :

Ե. Ուսումնական կաճառ կամ Ակադեմի մը կազմել մայրաքաղաքս գտնուած ազգին ամեն մասերէն, իսկ ուրիշ քաղաքներ գտնուող Հայ ուսումնականներէ, ինչպէս նաև օտարազգի ուսումնական անձերէ թրղթակից կամ պատուոյ անդամներ ընտրել :

Զ. Ազգային կրթութեան խորհրդոյ ստորագրածալ ամնականով ընդհանուր դպրոցական վերատեսուչ մը և երեք օգնական կարգել, և ասոր համար պէտք ե-

ղած եկամուտն որոշել :
Է. Ընդհանուր Ազգ. վարժարանաց համար ուսմանց հիմնագիր մը պատրաստել :
Ը. կրթական խորհրդոյ կամ որ նոյնն է Ազգ. վարչութեան կրթական մասին իրաւասութեան սահմանը և բոլոր ազգային վարժարանաց և անոնց Հոգաբարձութեանց հետ ունենալիք յարաբերութիւնները ճշդ դիւ որոշելու համար կանոնագրութիւն մը պատրաստել : (Հիմնագիրը և կանոնագրութիւնը վերոյիշեալ պիտոյից հայթայթման հետ սերտ կապակցութիւն ունենալով, կրթական խորհուրդս առ այժմ Հէր կրնար անոր պատրաստութեանը ձեռք զարնել :)

Վերջաբան

Կրթութեան խորհուրդս այս Տեղեկագիրը Ձեր Սրբազնութեան և պատկ. Ժողովոյդ մատուցանելով, կցաւի որ ի չգոյէ գործադիր պաշտօնատարաց, ինքը վարժարանաց այցելութիւններ ընելէ և Տեղեկագիր մը պատրաստելէ զատ ուրիշ գործ տեսնել չը կրցաւ : Խորհուրդս համոզուած է, որ առանց վերոյիշեալ միջոցներուն ոչ ներկայ վարժարանները բարեկարգել, ոչ նոր կանոնաւոր վարժարաններ հաստատել հետևապէս և ոչ ազգային ճշմարիտ յառաջադիմութիւն ունենալ կարելի է : Բայց ազգային յառաջադիմութեան ընդհանուր փափաք մը՝ մանաւանդ անհրաժեշտ կարևորութիւնը տեսնելով, կը յուսայ որ ազգը պատրաստ կ'ըլլայ ամեն զոհողութիւն յանձն առնուլ իր ապագան ապահովելու և իր սերունդը մտաւորապէս և բարոյապէս աւելի կատարելագործելու և ազնուացընելու համար :


Ուստի մեր առաջարկութիւնները՝ խնարհաբար ազգային վարչութեանդ ներկայացնելով՝ մնամք ամենայն յարգանօք Ձերումի բարձր Սրբազնութեան և Մեծ Տեարցդ :

Ամենախոնարհ ծառայք

- Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
- Զ. ԻՓԷՔՃԵԱՆ
- Ա. Ա. ՏԻԻՐԻ
- Պ. ՊԱՌՆԱՍԵԱՆ

Վ Ի Ճ Ա Կ Ա Գ Ի Ր

ԱՂԳԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆՈՅ Կ ՊՕԼՍՈՅ



Խառֆէ-ղ Ս. Ներսիսեան երկեւ Վարժարան

Աշակերտք ուսումնարանի	423
» նախակրթարանի	177
Աշակերտուհիք ուսումնարանի	60
» նախակրթարանի	70
Ուսուցիչք	10
Վարժուհիք	2
Սպասաւորք եւ Սպասուհիք	4
Տարեկան ծախք	60000

Ծանօթ. 9000 դուրուշ թոշակներէ, 15000 դրշ. եկեղեցւոյ տոկոսներէ, 36000 դրշ. կալուածներէ :

Խառֆէ-ղ Եանեազար Նոստար Բէշբէնի Վարժարան

Աշակերտ ուսումնարանի	130
Ուսուցիչք	16
Սպասաւորք	12
Տարեկան ծախք	450000

Ծանօթ. Եանեազարեան Կարապետ վարդապետի կտակէն եւ Նուպար փաշայի նուէրէն գոյացեալ գումարին տոկոսովն եւ 90 գիշերօթիկ աշակերտաց եւ 30 արտաքիններու թոշակովը :

Խառֆէ-ղ Որբանոց ուղիւնոց

Աշակերտուհիք ուսումնարանի	20
Ուսուցիչ	1
Տարեկան ծախք	48000

Ծանօթ. Տէրութեան կողմէ յատկացեալ նրպաստով, (15 քաշ հաց, եօթուկէս քաշ միս օրական) Սրբուհի մարապետին ձեռագործ աշխատութեան արդիւնքով եւ հասարակութեան նուէրներովն կը մատակարարուի այս ծախքը :

Գաւըճ Գաշա երկեւ Վարժարան

Աշակերտ նախակրթարանի	20
Աշակերտուհիք »	7

Ուսուցիչ	1
Սպասաւոր	1
Տարեկան ծախք	3000

Ծանօթ. Պզտիկ մաս մը թոշակէ, մնացածն ալ թաղախէ եւ եկեղեցիէն :

Բերա Նարեկեան Վարժարան

Աշակերտք ուսումնարանի	56
» նախակրթարանի	71
Ուսուցիչ	11
Սպասաւոր	5
Տարեկան ծախք	60000

Ծանօթ. Թաղական խորհրդէն :

Բերա Ս. Էջիմանոյ Վարժարան

Աշակերտ նախակրթարանի	142
--------------------------------	-----

Բերա Հռիփօսեանոյ Վարժարան

Աշակերտուհիք ուսումնարանի	19
» նախակրթարանի	26
Ուսուցիչ	2
Վարժուհի	1
Սպասաւոր	1
Տարեկան ծախք	13200

Ծանօթ. Թոշակներէ, եկեղեցւոյ հասոյթէն եւ զանազան նուէրներէ :

Բերա Քերեղմանարան երկեւ Վարժարան

Աշակերտ ուսումնարանի	23
» նախակրթարանի	87
Աշակերտուհիք «	55

Ղաւթիկա, Գաւառական Վարժարան

Աշակերտ ուսումնարանի	170
Ուսուցիչ	14
Սպասաւոր	2
Տարեկան ծախք	54000

Ծանօթ. Ս. եկեղեցւոյ անշարժ կալուածոց արդիւնքէն :

Պէշեմաշ Մարտահեան երկեւ Վարժարան

Աշակերտ ուսումնարանի	78
» նախակրթարանի	75

1. Բերաի վերջին հրդեհին պրեցան :

Աշակերտութիւնք Ուսումնարանի	69
« Նախակրթարանի	49
Ուսուցիչ	10
Վարժուհիք	2
Սպասաւոր ,	3
Տարեկան ծախք	54360

Ծանօթ. 3000 զրշ.ի գումար մը ամէն ամիս Թաղխորհուրդէն կը վճարուի եւ մնացեալը թոշակներէ կը գոյանայ :

Աղջկանց վարժարանը նշանակեալ թուոյն մէջ ունի 9 յոյն եւ 1 տաճիկ աշակերտուհի :

Օրէնքի-ը Սրբոց Թարգմանչաց Վարժարան

Աշակերտ Ուսումնարանի	60
« Նախակրթարանի	100
Ծանօթ. Թոշակներէ եւ եկեղեցիէն	

Օրէնքի-ը Հռիփսիփեանց Աղջկանց Վարժարան

Աշակերտութիւնք Ուսումնարանի	60
« Նախակրթարանի	15
Ուսուցիչ ,	7
Վարժուհիք	2
Ծանօթ. Թոշակներէ եւ եկեղեցիէն :	

Գորուչէշտէ երկուս Վարժարան

Աշակերտ ,	30
Աշակերտութիւնք	20
Ուսուցիչ ,	3
Տարեկան ծախք	10800

Ծանօթ. 5400 զուրուշ կալուած, 1440 զրշ. ամսական նուէր, 1800 զրշ. շրջագայած գանձանակէ, 600 զրշ. թապախէ եւ մնացեալը եկեղեցւոյ սնտուկէն :

Եկեղեցւոյ երկուս Վարժարան

Աշակերտ ,	28
Աշակերտութիւնք	6
Ուսուցիչ ,	2
Տարեկան ծախք	10000

Ծանօթ. 4200 զրշ. տղայոց թոշակներէ, 200 թապախէ, 1000 զրշ. գանձանակ, 92 զրշ. տարեկան սէհիմէ :

Էփրէն երկուս Վարժարան

Աշակերտ ,	15
Աշակերտութիւնք	15
Ուսուցիչ ,	2
Սպասաւոր ,	1

Ծանօթ. Ժողովրդեան նուէրներով :

Պեշտ-տէրէ երկուս Վարժարան

Աշակերտ ,	42
Աշակերտութիւնք	14
Ուսուցիչ	1
Տարեկան ծախք	9600

Ծանօթ. Եկեղեցւոյ սնտուկէն :

Պէշտի Վարժարան

Աշակերտ ,	40
Ուսուցիչ ,	3
Սպասաւոր ,	1
Տարեկան ծախք	11640

Ծանօթ. Երամեան Արրահամ պէյը կը վճարէ :

Գանդիլի երկուս Վարժարան

Աշակերտ ,	30
Աշակերտութիւնք	15
Ուսուցիչ ,	1
Տարեկան կախք	6000

Ծանօթ. Յատուկ եկամուտ չունի :

Գուրգիտանճուֆ երկուս Վարժարան

Աշակերտ	12
Աշակերտութիւնք	3
Ուսուցիչ ,	1
Սպասաւոր ,	1
Տարեկան ծախք	4440

Ծանօթ. Աշակերտաց ծնողթ հանգանակութեամբ կը մատակարարեն այս ծախքը :

1. Առ այժմ օրինաւոր դպրոց չը կայ, և թէպէտ Թաղ. Խորհուրդն տրամադիր է վարժարան մը հիմնելու, սակայն մինչև այն առեւն թաղին մանկտին անխամ չը թողելու համար ծնողաց առաջարկութեան վրայ առժամանակեայ յարկի մը ներքե կը պատուարուին :

Իսպիտոսը Ս. Խաչ Աւրժարան

Աշակերտ Ուսումնարանի	410
« Նախակրթարանի	170
Ուսուցիչ	14
Սպասաւոր	2
Տարեկան ծախք	48000
Ծանօթ. Թոշակներէ 14400 . եկեղեցւոյ սընտուկէն 36000 :	

Իսպիտոսը Ս. Խաչ աղջկանց Աւրժարան

Աշակերտուհիք Ուսումնարանի	85
« Նախակրթարանի	80
Ուսուցիչ	9
Վարժուհիք	3
Սպասաւոր	2
Տարեկան ծախք	73080
Ծանօթ. 24000 զրշ. եկեղեցւոյ սնտուկէն , 24000 զրշ. աշակերտաց թոշակներէ , 6000 զրշ կարէ հասոյթ , 19080 զրշ մասնաւոր նուէրք վիճակ. եւ այլն :	

Իսպիտոսը Եկեղեցւոյ Դահլիճի Աւրժարան

Աշակերտ Ուսումնարանի	80
« Նախակրթարանի	240
Ուսուցիչ	10
Սպասաւոր	3
Տարեկան ծախք	47880
Ծանօթ. Ամիսն 200 զրշ. չափ թոշակներէ եւ մնացեալը Թաղական խորհրդէն :	

Իսպիտոսը Եկեղեցւոյ աղջկանց Աւրժարան

Աշակերտուհիք Ուսումնարանի	55
« Նախակրթարանի	140
Ուսուցիչ	3
Վարժուհիք	2
Սպասաւոր	4
Տարեկան ծախք	23400
Ծանօթ. Ամիսն 150 զրշ. չափ թոշակէ եւ մնացեալը Թաղ. խորհրդէն .	

Գաղղբէի-ը Համալսարանի Աւրժարան

Աշակերտ Ուսումնարանի	54
« Նախակրթարանի	36

Ուսուցիչ	5
Սպասաւոր	1

Գաղղբէի-ը Մարտիրոսի աղջկանց Աւրժարան

Աշակերտուհիք Ուսումնարանի	48
« Նախակրթարանի	12
Ուսուցիչ	2
Վարժուհի	1
Սպասաւոր	1

Խառնուելու երկուսու Աւրժարան

Աշակերտ]	65
Աշակերտուհիք	27
Ուսուցիչ	2
Վարժուհի	1
Սպասաւոր	1
Տարեկան ծախք	11640
Ծանօթ. 6600 զրշ եկամուտ Պէղծեանէ , ու մնացածը եկեղեցւոյ սնտուկէն :	

Եկեղեցւոյ Ս. Փրկչի երկուսու Աւրժարան

Աշակերտք Ուսումնարանի	40
« Նախակրթարանի	70
Աշակերտուհիք	16
Ծանօթ. Մէկ քանի աշակերտներէ թոշակ կառնուի , մնացեալը Հիւանդանոցը կը հոգայ :	

Նախապատրաստ Խորհրդանի երկուսու Աւրժարան

Աշակերտ Ուսումնարանի	29
« Նախակրթարանի	105
Աշակերտուհիք	33
Տարեկան ծախք	15720
Ծանօթ. 6000 զրշ Թաղ. խորհրդէն կը տրուի ընկերութեան զրամագլխոյ շահէն , 3600 զրշ տղոց շարաթականներէ եւ 1000 զրշ. մօտ դանձանակէ :	

Սոմախիա Սահակեան Աւրժարան

Աշակերտ Ուսումնարանի	110
« Նախակրթարանի	115
Ուսուցիչ	10
Սպասաւոր	1

Սամախիս Երրորդական Երկուսու Վարժարան

Աշակերտ Ուսումնարանի	66
« Նախակրթարանի	30
Ուսուցիչ	3
Տարեկան ծախք	8400

Սամախիս Արհեստական ազգական Վարժարան

Աշակերտուհիք Ուսումնարանի	116
« Նախակրթարանի	43
Ուսուցիչ	10
Վարժուհիք	3
Սպասաւոր	6
Տարեկան ծախք	132000

Ծանօթ. 4000 զրչ եկեղեցւոյ օնտուկէն
 3500 « ազջիկներէն
 3500 « նուէրներէ
 3000 « փանոսեան էֆ. անձէն .

 14000

Եկեղեցւոյ Վարժարան

Աշակերտ Ուսումնարանի	110
« Նախակրթարանի	50
Ուսուցիչ	6
Սպասաւոր	1
Տարեկան ծախք	24000

Ծանօթ. 18000 զրչ Թաղ. խորհրդէն, 2400 զուրուշի չափը թոշակներէ :

Եկեղեցւոյ ազգական Վարժարան

Աշակերտուհիք	60
Ուսուցիչ	1
Վարժուհի	1
Սպասաւոր	2
Տարեկան ծախք	9000

Գոմեհաճոյ Մայր Եկեղեցւոյ Վարժարան

Աշակերտ Ուսումնարանի	84
« Նախակրթարանի	216
Ուսուցիչ	9
Սպասաւոր	2
Տարեկան ծախք	68400

Ծանօթ. 7000 զրչ-ի չափը թոշակէ եւ մընացեալը Թաղ. խորհուրդէն ապահովեալ :

Գոմեհաճոյ Լոռաստորչայ ազգական Վարժարան

Աշակերտուհիք Ուսումնարանի	200
« Նախակրթարանի	120
Ուսուցիչ	7
Վարժուհիք	4
Սպասաւոր	4

Ծանօթ. Տարեկան 24000 զրչ. Թաղ. խորհուրդէն կը արուի, 6-7000 զրչը թոշակներէն կը գոյանայ եւ մնացեալն ալ մասնաւոր նուիրատուութեամբ :

Գոմեհաճոյ Պեղճեան Վարժարան

Աշակերտք ուսումնարանի	50
« Նախակրթարանի	43
Ուսուցիչ	5
Սպասաւոր	1

Ծանօթ. Գարոցն իրեն յատուկ եկամուտունի եւ սղայոց ամէնն ալ ձրի են :

Գոմեհաճոյ Պեղճեան ազգական Վարժարան

Աշակերտուհիք Ուսումնարանի	24
« Նախակրթարանի	26
Ուսուցիչ	1
Սպասաւոր	1

Կերթի փաշա Երկուսու Վարժարան

Աշակերտ	60
-------------------	----

Պաշա Թորենեան Երկուսու Վարժարան

Աշակերտ Ուսումնարանի	73
« Նախակրթարանի	111
Աշակերտուհիք »	92
Տարեկան ծախք	48000

Ծանօթ. Ամիսն 2500 զուրուշը Թաղական խորհուրդէն ապահովեալ, 150 զուրուշը Ընկերութենէն եւ մնացեալը թոշակէ դժուարաւ կ'ապացուի :

1. 1865ին գարոցն պրած է եւ հիմա եկեղեցւոյ դաւիթը կը ժողովուն մանչ եւ ազջիկ տղայք :

Գորակեօճրիւնի, Սալմախոճրաւի նախակրթիւնի Վարժարան

Աշակերտ Նախակրթարանի	135
Ուսուցիչ	3
Սպասաւոր	1
Տարեկան ծախք	41640

Գորակեօճրիւնի Ուսումնարան

Աշակերտք Ուսումնարանի	59
Ուսուցիչք	2
Սպասաւոր	2
Տարեկան ծախք	10440

Գորակեօճրիւնի Հռիփփոխեանց աղջկանց Վարժարան

Աշակերտուհիք	125
Ուսուցիչ	7
Վարժուհի	1
Սպասաւոր	1
Տարեկան ծախք	36360

Ծանօթ. Այս երեք դպրոցներուն ծախքին մէկ մասը թոշակներէ եւ մաս մ'ալ Թաղական խորհրդէն, իսկ դասագրքերուն մեծ մասը Այրբենի ընկերութենէն :

Էջիոյ Ս. Եղիա Պէղծեան Վարժարան

Աշակերտ	57
Ուսուցիչ	4
Սպասաւոր	1
Տարեկան ծախք	10320

Ծանօթ. Այս ծախքը կը մատակարարուի երկեղեցւոյ սնտուկէն եւ թոշակներէն, որու ամսական գումարն է 200 դուրուշ :

Էջիոյ Ս. Հռիփփոխեանց աղջկանց Վարժարան

Աշակերտուհիք	30
------------------------	----

Ուսուցիչ	2
Վարժուհի	1
Սպասաւոր	1
Տարեկան ծախք	4200

Ծանօթ. Այս ծախքը կը մատակարարուի աղջկանց թոշակներէն (100 դուրուշ) եւ անոնց ստեղծագործութեան արդիւնքովն, երկեղեցւոյ սնտուկը չ'օգնէր, Թէոփիլէ Պօղոսեան տնօրէնութիւնը իւր վրայ առած ըլլալուն :

Էջիոյ Ս. Աստուածածին երկեւ Վարժարան

Աշակերտ	25
Աշակերտուհիք	33
Ուսուցիչ	2
Վարժուհի	1
Սպասաւոր	2
Տարեկան ծախք	14070

Ծանօթ, Այս ծախքը կը մատակարարէ Թաղական սնտուկը, աշակերտաց թոշակներովն եւ Արտէմեան ու Սանուց ընկերութեան նըպաստներովը :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇԻՒ

Վարժարան մանչ տղոց	33
» աղջիկ »	28
Աշակերտք	3842
Աշակերտուհիք	1862
Վարժապետք 1	198
Վարժուհիք	28
Սպասաւորք եւ սպասուհիք	69
Տարեկան ծախք 2	4,394,490

1. Վարժապետաց մէջ կան այնպիսիք, որ քանի մը վարժարաններու մէջ երթեկուծութիւն կ'ընեն դասախօսելու, հետեւաբար վարժապետաց իրական թիւը այս գումարէն փոքր է :
2. Միջադիւղի, Գատրգիւղի եւ Գումրախուլի Աւուարչեան եւ Պէղծեան վարժարանաց ծախքերը այս հաշուէն դուրս են, այսինքն անհաւած չ'են :



